Նախագահ
Թոմաս Ս. Մոնսոն

Ծառայելու Փոկչի կանչը

Դրանք, ովքեր մաթեմատիկա են ուսումնասիրել, գիտեն, թե ինչ է ընդհանուր հայտարարը: Վերջին Օրերի Սրբերի համար գոյություն ունի մի ընդհանուր հայտարար, որը կապում է մեզ իրար: Այդ ընդհանուր հայտարարը անհատական կոչումն է, որ մեզանից յուրաքանչյուրը ստանում է, որպեսզի այստեղ երկրի վրա Աստծո թագավորությունում հանձնարարություններ կատարի:

Դուք երբևէ մեղանչե՞լ եք, տրտնջալով, երբ կոչում եք ստացել: Թե՞ դուք երախտագիտությամբ եք ընդունում ձեր եղբայրներին ու քույրերին ծառայելու յուրաքանչյուր հնարավորությունը, իմանալով, որ մեր Երկնային Հայրը կօրհնի նրանց, ում Նա կանչում է:

Ես հուսով եմ, որ մենք չենք կորցնի ծառայելու մեր փայփայված հնարավորությունների իրական նպատակը: Այդ նպատակը՝ այդ հավերժական նպատակը, նույնն է, որ տրվել է Տիրոջ կողմից, և գտնվում է Թանկագին Մարգարիտում. «Քանզի ահա, սա է իմ գործը և իմ փառքը՝ իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը»:[1]

Թող որ մենք միշտ հիշենք, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամը կանչված է կրելու ոչ թե հարմարավետ թիկնոց, այլ պարտականության փարաջա: Մեր անձը փրկելու հետ մեկտեղ, մեր պարտականությունն է՝ առաջնորդել ուրիշներին դեպի Աստծո սելեստիալ արքայությունը:

Աստծուն ծառայելու ճանապարհով հոժարակամ քայլելով մենք երբեք չենք հայտնվի Շեքսպիրի Կարդինալ Վոլսեյի իրավիճակում: Իր թագավորին ամբողջ կյանքում ծառայելուց հետո իր իշխանությունից զրկվելուց հետո նա տխրությամբ գանգատվում է.

Եթե ես միայն ծառայեի իմ Աստծուն,
Իմ թագավորին ծառայածի կիսով չափ,
Նա ինձ իմ այս տարիքում
Մերկ չէր թողնի իմ թշնամիների առաջ:[2]

Ինչպիսի՞ ծառայություն է պահանջում երկինքը: «Տերը պահանջում է սիրտն ու պատրաստակամ միտքը. և պատրաստակամն ու հնազանդը կճաշակեն Սիոնի հողի բարիքն այս վերջին օրերին»:[3]

Ես մի պահ կանգ եմ առնում, երբ մտածում եմ Նախագահ Ջոն Թեյլորի (1808–87) խոսքերի շուրջ. «Եթե դուք չեք մեծարում ձեր կոչումները, Աստված

պատասխանատվության կկանչի ձեզ նրանց համար, ում դուք կարող էիք փրկել, եթե դուք կատարեիք ձեր պարտականությունը»:[4]

Հիսուսի կյանքը նման էր բարության փայլող լույսի, մինչ Նա ծառայում էր մարդկանց մեջ. «Ես ձեր միջումը ծառայողի պէս եմ»,[5] - հայտարարեց Հիսուսը, երբ Նա ամրացրեց հաշմանդամի ոտքերը, վերականգնեց կույրի տեսողությունը, խուլի լսողությունը և կյանք շնորհեց մահացածի մարմնին:

Բարի Սամարացու խնդրի հետ կապված Ուսուցիչը սովորեցրեց մեզ սիրել մեր մերձավորներին մեր անձերի պես:[6] Հարուստ իշխանին տրված պատասխանի միջոցով Նա սովորեցրեց մեզ ազատվել մեր եսասիրությունից:[7] 5000-ին կերակրելով, Նա սովորեցրեց մեզ տեսնել ուրիշների կարիքները:[8] Եվ Լեռան Քարոզի միջոցով Նա սովորեցրեց մեզ նախ փնտրել Աստծո թագավորությունը:[9]

Նոր Աշխարհում հարություն առած Տերը հայտարարեց. «Դուք գիտեք այն բաները, ինչ դուք պիտի անեք իմ եկեղեցում. քանզի այն գործերը, որոնք դուք տեսաք ինձ անելիս, դրանք պետք է նաև դուք անեք. քանզի այն, ինչ դուք տեսաք ինձ անելիս, հենց այդ պետք է դուք անեք»:[10]

Մենք օրհնում ենք ուրիշներին, մինչ ծառայում ենք նմանվելով «Հիսուսին, որ Նազարեթիցն է, . . . որ ման եկաւ բարի անելով»:[11] Աստված օրհնի մեզ, որ ուրախություն գտնենք մեր Երկնային Հորը ծառայելում, մինչ մենք ծառայենք Նրա զավակներին երկրի վրա:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մովսես 1.39
2. Վիլիամ Շեքսպիր, *Հենրի Ութերորդ թագավորը*, գործողություն 3, տեսարան 2, տող 456-458:
3. Վարդապետություն և Ուխտեր 64.34
4. *Teachings of Presidents of the Church: John Taylor* (2001), 164.
5. Ղուկաս ԻԲ.27
6. Տես Ղուկաս Ժ.30–37, տես նաև Մատթեոս ԻԲ.39:
7. Տես Մատթեոս ԺԹ.16–24, Մարկոս Ժ.17–25, Ղուկաս ԺԸ.18–25:
8. Տես Մատթեոս ԺԴ.15–21, Մարկոս Զ.31–44, Ղուկաս Թ.10–17, Հովհաննես Զ.5–13:
9. Տես Մատթեոս Զ.33:
10. 3 Նեփի 27.21
11. Գործք Ժ.38

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

«[Տերը] թույլ չի տա, որպեսզի մենք ձախողվենք, եթե մենք կատարենք մեր մասը: Նա կմեծարի մեզ նույնիսկ մեր տաղանդներից ու ունակություններից առավել: . . . Դա ամենաքաղցր փորձառություններից մեկն է, որ կարող է լինել մարդ արարածի կյանքում» (Էզրա Թավթ Բենսոն, *Ուսուցում՝ չկա ավելի մեծ կոչում* [1999], 20): Կիսվեք փորձառությամբ, երբ դուք կամ մեկը, ում դուք գիտեք, զգացել է, թե ինչպես է Տերը մեծարում տաղանդներն ու ունակությունները: Հրավիրեք ընտանիքին կիսվել իրենց դրական փորձառությամբ, երբ նրանք արձագանքել են «ծառայելու Փրկչի կանչին»:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Տաճարում ծառայելը

Բենջամին Ա.

Երբ լրացավ իմ 17 տարեկանը, ես սկսեցի լրջորեն մտածել իմ ապագայի մասին, և ես աղոթեցի Երկնային Հորը, որ իմանայի, թե ինչ կարող էի անել, որպեսզի միսիայի գնայի և ստանայի Մելքիսեդեկյան Քահանայություն: Ես զգացի, որ պիտի ավելի հաճախ գնայի տաճար, քանի որ այն Տիրոջ տունն է և այն վայրը, որտեղ ես ամենամոտը ինձ կարող էի զգալ իմ Երկնային Հորը:

Ուստի ես նպատակ դրեցի տարվա ընթացքում կատարել 1000 մկրտություն: Ես իսկապես զգացի այս նպատակն ունենալու կարիքը: Ես ծոմ պահեցի, որպեսզի իմանայի, թե դա արդյոք այն է, ինչ ես պիտի անեի: Մեր Երկնային Հայրը պատասխանեց ինձ, և ես սկսեցի գնալ Թամփիկո Մեխիկո Տաճարը ամեն շաբաթ օր:

500 մկրտություններ անելուց հետո ես նպատակ դրեցի ընտանեկան պատմության որոնումներ կատարել իմ նախնիների համար, և ինձ այնքան շատ դուր եկավ որոնումներ կատարելը, որ ես չէի կարողանում կանգ առնել, քանի որ ես անուններ էի փնտրում: Ես գտա 50 անուն և իմ ընտանեկան պատմության ութը սերունդներ: Ե օգնեցի կատարել տաճարային աշխատանք նրանց բոլորի համար:

Ի վերջո, ես կատարեցի ավելի քան 1300 մկրտություններ, և ավարտեցի սեմինարիան, ստացա Մելքիսեդեկյան Քահանայությունը և այժմ ծառայում եմ որպես լիաժամկետ միսիոներ, որը իմ կյանքի մեծագույն նպատակներից էր:

Ես կարող եմ ինչ-որ բան անել ուրիշների համար

Մեզանից յուրաքանչյուրը կարող է ինչ-որ բան անել ուրիշներին օգնելու համար: Նախագահ Մոնսոնն ուսուցանել է, որ մենք պետք է սիրենք յուրաքանչյուրին և սովորենք տեսնել, թե ինչպես կարող ենք օգնել նրանց:

Երբ դուք ընթրում եք ձեր ընտանիքի հետ, խորհուրդ տվեք, որ յուրաքանչյուր ընտանիքի անդամ կիսվի մի բանով, որ նա արել է ինչ-որ մեկին այդ օրը ծառայելու համար: Ամեն օր գրի առեք ձեր սեփական ծառայության փորձառությունները ձեր օրագրում:

© 20012 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/11: Թարգմանության հաստատումը. 6/11: *First Presidency Message, August 2012*-ի թարգմանությունը: Armenian. 10368 201

Գործել անհրաժեշտ պահին

Ուսումնասիրեք այս նյութն աղոթքով և, ինչպես հարմար է, քննարկեք այն քույրերի հետ, ում դուք այցելում եք: Օգտագործեք հարցերը, որոնք կօգնեն ձեզ ամրացնել ձեր քույրերին և Սփոփող Միությունը դարձնել ձեր սեփական կյանքի ակտիվ մասը:

Հավատք, Ընտանիք, Սփոփանք

Որպես այցելող ուսուցիչներ մեր նպատակներից մեկն է օգնել ամրացնել ընտանիքներն ու տները: Քույրերը, ում մենք այցելում ենք, պետք է կարողանան ասել. «Եթե ես խնդիրներ ունեմ, ես գիտեմ, որ իմ այցելող քույրերը կօգնեն առանց հրավերի սպասելու»: Որպեսզի ծառայենք, մենք պարտականություն ունենք զգայուն լինել այն քույրերի կարիքների հանդեպ, ում մենք այցելում ենք: Եթե մենք ոգեշնչում փնտրենք, մենք կիմանանք, թե ինչպես արձագանքենք յուրաքանչյուր քրոջ հոգևոր և նյութական կարիքներին, ում մեզ հանձնարարված է այցելել: Այնուհետև, օգտագործելով մեր ժամանակը, հմտությունները, տաղանդները, հավատքի աղոթքները և հոգևոր ու էմոցիոնալ աջակցությունը, մենք կարող ենք օգնել՝ մատուցելով կարեկցող ծառայություն հիվանդության, մահվան և այլ հատուկ պայմանների ժամանակ:[1]

Այցելող ուսուցիչներից ստացված տեղեկությունների օգնությամբ Սփոփող Միության նախագահությունը տեղեկանում է նրանց մասին, ովքեր հատուկ կարիքներ ունեն ֆիզիկական կամ էմոցիոնալ հիվանդությունների, ծայրահեղ դեպքերի, ծնունդների, մահվան, հաշմանդամության, միայնակության կամ այլ խնդիրների պատճառով: Այնուհետև Սփոփող Միության նախագահը զեկուցում է իր ստացած տեղեկությունները եպիսկոպոսին: Նրա ղեկավարությամբ նա կազմակերպում է աջակցությունը:[2]

Որպես այցելող ուսուցիչներ մենք կարող ենք ունենալ «մեծ պատճառ . . . ցնծալու», որի պատճառն է այն «օրհնությունը, որը պարգևեց մեզ, որ մենք Աստծո ձեռքում գործիքներ դարձվեցինք՝ իրականացնելու այս մեծ աշխատանքը» (Ալմա 26.1, 3):

Սուրբ գրություններից

Մատթեոս ԻԲ.37–40, Ղուկաս Ժ.29–37, Ալմա 26.1–4, Վարդապետություն և Ուխտեր 82.18–19

Մեր պատմությունից

Եկեղեցու վաղ շրջանում անդամները քիչ էին և համակենտրոնացված: Անդամները կարող էին արագ արձագանքել, երբ ինչ-որ մեկը կարիքի մեջ էր: Այսօր մեր անդամների թիվն անցնում է 14 միլիոնից և մենք ցրված ենք աշխարհով մեկ: Այցելությամբ ուսուցանելը Տիրոջ ծրագրի մի մասն է, որի միջոցով օգնություն է տրվում Նրա բոլոր զավակներին:

«Միակ համակարգը, որը կարող էր սատարել և մխիթարել աշխարհով մեկ տարածված ամբողջ եկեղեցուն բազմազան ձևերով, կլիներ անհատ ծառաների միջոցով, որոնք մոտ կլինեին կարիքի մեջ գտնվող մարդկանց», - ասել է Նախագահ Հենրի Բ. Այրինգը՝ Առաջին Նախագահության Առաջին Խորհրդականը:

«. . . Յուրաքանչյուր եպիսկոպոս և յուրաքանչյուր ճյուղի նախագահ ունի Սփոփող Միության նախագահ, ում կարող է վստահել», - շարունակել է նա: «Նա ունի այցելող ուսուցիչներ, ովքեր գիտեն յուրաքանչյուր քրոջ դժվարություններն ու կարիքները: Նա կարող է նրանց միջոցով մանրամասներ իմանալ անհատների և ընտանիքների վերաբերյալ: Նա կարող է օգնության հասնել և օգնել եպիսկոպոսին անհատների և ընտանիքների համար հոգ տանելու իր կոչման մեջ»:[3]

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես *Handbook 2: Administering the Church* (2010), 9.5.1; 9.6.2:
2. Տես *Հեռնարկ 2,* 9.6.2:
3. Henry B. Eyring, in *Daughters in My Kingdom: The History and Work of Relief Society* (2011), 110.

Ի՞նչ կարող եմ ես անել:

1. Ես օգտագործու՞մ եմ իմ պարգևներն ու տաղանդները ուրիշներին օրհնելու համար:

2. Քույրերը, որոնց համար ես պատասխանատու եմ, գիտե՞ն, որ ես կամենում եմ օգնել նրանց, երբ նրանք կարիքի մեջ են:

Լրացուցիչ տեղեկության համար, այցելեք www.reliefsociety.lds.org:

© 2012 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/11: Թարգմանության հաստատումը. 6/11:*Visiting Teaching Message, August 2012*-ի թարգմանությունը: Armenian. 10368 201